

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ես՝ Միշա Ստեփանի Խուդավերդյանս, 2020 թվականի մարտի 11-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Հանդիսանալով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի անդամ մասնակցել եմ նիստերին և կայացվող որոշումներին:

2. Համակարգել և կատարել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշմամբ (Քրեակատարողական և Պրոբացիայի ոլորտի ռազմավարության) հաստատված N 2 հավելվածի 39-րդ, 23-րդ, 18-րդ, 56-րդ, 10-րդ, 35-րդ, 18-րդ, 4-րդ, 7-րդ, 4-րդ, 39-րդ, 15-րդ կետերի կատարումն:

3. Մշակել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացություն:

4. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը

5. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ «Ենթյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 10761/16 գանգատի շրջանակներում բարձրացված հարցադրումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը՝ համապատասխան ապացույցներով (տեղեկանքներ, լուսանկարներ):

6. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «*Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի*» թիվ 54684/19 գործով անհրաժեշտ տեղեկատվությունը:

7. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «*Մայրապետյանն ընդդեմ Հայաստանի*» թիվ 43/19 գանգատի կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը:

8. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը

9. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովի, դրան կից աշխատանքային խմբերի գործունեության կարգը և վարձատրության չափորոշիչները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

10. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի N 34-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանի նախագիծը, որի ընդունման շնորհիվ լուծվեցին մի շարք խնդիրներ դատապարտյալների տեղաբաշխման հետ կապված:

11. Մշակել և շրջանառել եմ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

12. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 350-Ն որոշման մեջ լրացում

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

13. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

14. Լրամշակել են «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշման նախագիծը:

15. Մշակել և շրջանառել են «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու ու քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

16. Մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացրել 2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին Արդարադատության նախարարության իրավասության ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ տեղեկանքը:

Հարկանշական այլ գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել են նաև հետևյալ աշխատանքները.

➤ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված հրատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվություններին ի պատասխան ներկայացրել են ՀՀ ԱՆ պաշտոնական 12 մեկնաբանություններ:

➤ Կազմել են ՀՀ արդարադատության նախարարության ուղղված գրությունների 50 պատասխան նախագիծ:


➤ Պատասխանել են տեղեկատվության տրամադրման հարցման 50 գրությունների և այլն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԵՎ ՊՐՈԲԱՅԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝



ՄԻՇԱ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ